Թ.

Ուղթիք կամ Օլթի Գաւառ:

Օլթի գաւառը արեւմտեան կողմից միացած է Թորդումին, հարաւից Բասենին, արեւելքից Վանանդին եւ Կողային, հիւսիսից Կլարջէթին, Պարխալին եւ Կիցկիմին: Օլթի վտակի կենդրոնական զոյգ ծայրերից մինն սկսւում է Կանդիլ (Ոսկեանց) եւ միւսը Դարրիա (Տաւրոս) Կուլկուլ լեռներից, իրարից վեց կիլոմետր հեռաւորութեամբ, միանում են Զիվեսի-Կայա գաւառի մօտ, որտեղից առաջ անցնելով ոռոգում է Կարմըրիկ, Բաշ-կալա, Ագրակ, Վեջիխսա, Շոշա[1], Նարիմանն, Թոփրակ-կալա կենդրոնական գեղերը մինչեւ Օլթի աւանը հասնելը: Այս վտակն ընդունում է աջ կողմից՝ Բուտ-կալա[2], Ջանձոր, Կուրդ-թաշ, խոր-

---

[1] Շօշա գեղը շինուած է նախկին մի մեծ աւանի տեղը, որից մնացած կան բլրակներ եւ ուրիշ աւերակներ, որոնցից յաճախ դուրս են գալիս զանազան բրտեղէն-փարչ, պուտուկ, գունաւոր ծաղկաման եւ քանդակաւոր պրտիկներ, որոնք ցոյց են տալիս թէ ժամանակին շատ առաջ է գնացած եղել բրտային խեցեղէն գործուածքները այդ աւանում: Շօշան այգեստաններ ունի Օլթի վտակի ափերում եւ ծաղկած է չոր մրգի, մանաւանդ թթից եւ խաղողից պատրաստուած մաթն ու պաստեղը, քաման եւ չիրը: Շօշի-բացի Ղարաբաղի Շուշուց, ունինք Լենինականի գաւառում (Շիրակի) Շիշ-թափէ, Շիշ-թափա-Լոռի (Թիֆլիսի գաւառում), Շիշ-թափա Ակբարի (Կարսի գաւառում), Շուշի-քենդ՝ (Շուշի գաւառում), որոնք ցոյց են տալիս, թէ արմատը հին է եւ տարածուած: Արդեօք Էլամի Շօշ կամ Սուզ քաղաքի հետ կապ չունի՞ այս անունը:

[2] Քեօր-օղլի բերդեր անուանուածներից մէկն է, որի